

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie مجموعہ علوم

ԽՐԱԳՐԱԳԵՏ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ԲՈՂԱՏ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 40

1898 ԴԵԿՏԵՄԲԵՐ 26

Ամեն Տեղի համար Տարեկան կանխիկ 30 դահեկան, վեցամսեայ 26, իսկ եռամսեայ, 13 դահեկան: Օտար երկրաց համար տարեկան կանխիկ 15 ֆրանկ: Թղթասարի ծախքը հմբագրութեան կը վերաբերի: Հասը 40 փարայ: Գաւառներէ բօսքի բոլ ալ կ'ընդունուի 100 դրուէի տեղ 105 դրուէ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մ. Ե. — Հացի Խնդրոյն շուրջը:

ԽՐԱՔՍ. — Առտնին Տնտեսականք. Հարցում և Պատասխան:

ԳՐ. Յ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ. — Բաց նամակ առ Մեղքոն Գալէնտէր էֆ.:

Ղ. ԲՈՂԱՏ. — Ճարտարարուեստական. Ներկարարութիւնը: Բամպակ:

Մ. Կ. ՄԱԼԱՔԵԱՆ. — Տեսական և Գործնական Ներկարարութիւն. Օգտակարութեան նութիւն. Յրտութիւն:

ՄԱՏԱԹ. — Բժշկական Նօթեր. Ծանր դալիստը:

Ղ. ԲՈՂԱՏ. — Շերամաբուծութիւնը Բասթէօնտոն դրութիւնով. Հնտաբուծութիւն Մանրադիտական գերընտրութիւնով:

Տ. ՊՕՁԱՃԵԱՆ. — Մղոն. Ազգերու երկայնութեանց չափերը: Նամակ առ Խմբագրութիւն:

Ազգային լուրեր:

Թղթակցութիւն, Ազգ. Էջն.

Հատը 40 փարայ

ՏՊԱԳՐ. ԳՐԻԳՈՐ Պ. ԳԱՅՍԵՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապ. Ալի Ճատտէսի, Թիւ 4

Մանիսա .— Գ . Կ . Ունճեան էֆ . —
Յառաջիկային կը հրատարակուի . շահե-
կան է . երկրորդին առայժմ որոշ պա-
տասխան չենք կրնար տալ :

Բարիզ .— Տ . Տ . էֆ .— Շնորհակալու-
թիւն Ձեր ջանքերուն . թերթերը կը
ղրկուին :

Մալկարա (Գործակալ) .— Նամակնիդ
ստացանք . էվէրէկ թերթերը զրկուե-
ցան . սխալման արդիւնք էր . Տիմէթո-
քայի հասցէն չէք տուած : Նամակ կ'ս-
տանաք :

Հալէպ .— Ս . Պողիկեան էֆ . — Նոյ .
20 թուականով նամակ զրկուեցաւ . պա-
տասխանին կ'սպասենք :

Թրիպօլի .— Գ . Գըլլըճեան էֆ .— Բա-
ժանորդ արձանագրեցինք . բրինձի մշա-
կութեան վրայ ձեր ուղած տեղեկու-
թիւնները կը տրուին գոհացուցիչ կեր-
պով . դուք ձերը կրնաք զրկել :

Ատարազար .— Կ . Սէմիզեան էֆ . —
Եթէ քիչ մը համբերատար ըլլաք , թէ'
ձեր նախորդ հարցումին պատասխանը
ամբողջովին պիտի ստանաք , և թէ մօ-
տաւորապէս արդէն , մեր ներկարարու-
թեան բաժնին մէջ կ'տաւը , վուշը ճեր-
մկցնելու ընտրելագոյն միջոցները պիտի
կարդաք :

Իզնիմիտ (Գործակալ) .— Հնդերոպա-
կան նախալիզուէն 2 հատ զրկեցինք ,
ինչպէս և Մասիս մը . միւսին փետրուա-
րի թիւը չէ գտնուած տակաւին , եթէ
կ'ուզէք այնպէս կը զրկենք : Յօդուած և
հանելուկ ստացած ենք . առաջինը հրա-
տարակուեցաւ . շնորհակալութիւն Մատ-
թէոսեան էֆ .ի համակրանաց : Միւսնե-
րը իրենց կարգին կը հրատարակուին ,
անհոգ եղէք :

Այտըն .— Օր . Զ . Եազըճեան .— Մտա-
ցած ենք նամակնիդ . մօտաւորապէս :

Հ . Ս . Տէրվիշեանի ՀՆՏԵԻՐՈՊԱԿԱՆ
ՆԱԽԱԼԵԶՈՒԹՅԱՆ ԳՐԵՐԻՆՈՒԼԵԶՈՒ ՀԱՆ-
դէսին ամբողջական հաւաքածոյին պէտք
ունեցող բանասէրներն ու գրասէրները
կրնան խմբագրութեանս դիմել : Աւե-
լորդ է հոս առաջ բերել այդ երկու հե-
ղինակութեանց արժէքը . ամէն բանա-
սէրի ու գրահմուտի համար անհրաժեշտ
գործեր են :


Գինները խիստ գիւրամատչելի են .
փութացէ՛ք առիթէն օգտուիլ մինչև մէկ
ամիս , որովհետև օրինակները սպառած
են :

ՏԳԴ . Բ . ՁԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ՄԱՆԿԱԲԱՐՁ-ԿՆԱԽՏԱԲՈՅԺ , ՄԱՍՆԱԳԷՏ

ՋՂԱՅԻՆ ՀԻԻԱՆԴՈՒԹԵԱՆՑ

Որ իր երկար փորձառութեամբ ծա-
նօթ է , մի քանի տարիէ ի վեր ուսում-
նասիրութիւններ կատարելէ զկնի ի Բա-
րիզ , դարձած է մայրաքաղաքս , հաս-
տատելով իր բնակութիւնը Բերա Մէք-
թէպ-Պայրամ-Փողոց , թիւ 29 , ուր ամէն
օր կէս օրէ վերջ հիւանդ կ'ընդունի :
Մասնաւորապէս կ'դարմանէ կնոջական և
ջղային ամէն հիւանդութիւններ : ԵՇ .
նոյն ժամուն ձրի կը դարմանէ կարօտ-
եալները : Ելեքտրաբուժում ամէն տե-
սակներովը , մասնաւոր քննութիւն Ռէ-
օնթկէնեան մեքենայով :



գիրքը, նոր հոգի առած՝ սկսաւ մաս- նանիշ ընել ժողովուրդին յուր կողմերը, աւանդամուլ ունակութիւնները, որոնք փնտրակար են հայ մարդուն հանրային և անհատական շահերուն: Սակայն ցաւ է ըսել թէ՛ հայ կղերը՝ որ աւելի շատ ազդեցութիւն կրնար ունենալ բարքե- րու ազնուացման մեծ գործին մէջ, — Արմաշցիները և հիներուն փոքր մասը բացառութիւն կ'ընդունիմ — անտարբեր տակաւին ըմբռնած չէ իր հօտին պէտ- քցուն: Քառորդ դար առաջ ինչ որ էր իր մտաւորական մակարդակը — մակար- դակ ունէի՞ն, — նոյնն է այսօր: Իր տա- րազի սեւութիւնը՝ կարծես սրտին զար- կած՝ բոլորովին մոռցեր է ժողովուրդը, որուն հացն ու ջուրը իր կենդանութիւնն եղած են: Միամիտ հայ ժողովուրդ, կղերէզ տեսած այգքան փնտնելի վերջ, տակաւին յարգն ու պատիւը չեռ զլանար անոր, քու կրօնական զգացումի ծալ- քերուն մէջ, հոգիի արթնութիւններու գոյութիւնը ցոյց տուած կ'ըլլատ: Թող մեր կղերն իր պարտքը չի ճանչնայ, բայց դո՛ւ, հայ ժողովուրդ, օգնէ՛, միշտ օգ- նէ՛ ինքզինքիդ որ Աստուած ալ քեզ օգ- նէ: Երպէս զի կղերն ալ սթափելով՝ իր կոչումին հաւատարիմ գոնաի, և թօթ- ուէ ու թօթափէ այն հին ու նեխած բարքերն՝ որոնց որքան ծառայեցիր բա- ւական է: Անոնք եղան քու անկումիդ պատճառը, որով շուկայի և վաճառա- կանութեան հրապարակին վրայ՝ գիրքդ կործնուցիր, զոր օտարները եկան խլե- ցին քեզմէ: Եւ օր մ'օրանց ասոր պատ- ճառները դուն քեզի քննեցի՞ր երբեք: Թէ ինչո՞ւ և ո՞ւրտի: Եթէ հարց- նենք մեր շուկացիներէն մէկուն թէ ա- ւելատուրի մարդը պէ՞տք է խաբէ, խաբ- դախէ որ յաջողի: Խոկոյն «այո՛» պիտի պատասխանէ: առանց սուտի կարելի չէ յառաջանալ: Ինչո՞ւ ասոր պէս շատ մը գէշ և փնտրակար ըմբռնումներ եկած արմատացած են մեր շուկայի բարքերուն մէջ: Որովհետեւ ճշմարիտ ընկերականու-

թեան և համերաշխ առուտուրի ոգին գոյութիւն չունի տակաւին մեր մէջ: Արդիք, աւա խօսիլը, գիմացինը խա- բէն ու խարդախելը՝ աւելատուրի մար- դուն՝ կերակուրի համար ո՛րքան պէտք է աղն ու պզպեղը՝ այնքան կարևոր կը սեպեն: Բոլորովին սխալ սակայն:


Աւելատուրի գործի — մեծ կամ պզտիկ հոգ չէ — մը մէջ, յաջողելուն առաջին և էական պայմանն է. «ընկերը սիրել անձին պէս»: Այս սովուն նշանաբանն ունեցող ամէն խանութպան կամ վաճա- րական, կարելի չէ որ ձախողուածք մ'ունենայ կամ գժբաղդ վիճակի մը ենթարկուի: Միշտ յառաջ և աւելի յա- ռաջ: Հրապարակը բաց պիտի ըլլայ այդ պիտի մարդուն համար: Եւ անգամ մը որ շուրջը գոնուողները լսեն քու նշանա- բանդ և համազուին թէ չես խաբեր, չես խարդախեր, չես ստեր, այլ քու շահուդ հետ ընկերիդ շահն ալ կը փնտռես, թէ հաւատարիմ ես խօսքերուդ և խոստում- ներուդ: ա՛լ անկասկած եղիր, յաջողու- թիւնը ինքնիրենը կուգայ:

Անշուշտ կը ճանչնաք մարդեր՝ որ ամբողջ օրը, շաբաթը բոլոր կ'աշխատին, կը աքնին, և կրկին գրպաննին նայիս ծակ է, կարօտ են: ստիպուած են գը- լուխ ծռելու հացագործին և նպարա- վաճառին: փնտած և քննած էք այդ կարգի մարդիկներուն անյաջողութեան պատճառները: եթէ այո՛, այն ատեն թերևս կոյր բաղդին վերագրէք այդ պիտեաց ձախողուածն կամ անյաջողու- թիւնը: սխալ տրամաբանութիւն: հոն գաղտնիք մը, բարոյական ախտ մը կայ անպատճառ, զոր դուք տեսած ու նշմարած չէք ձեր պրպտումներուն մէջ: Սակայն սպասելու կարողութիւնն ունեցէք, յաջորդ յօգուածով և հետ- զհետէ կը խոստանամ ցոյց տալ անոնց միքրոպներուն հետ դարմաններն ալ:

Մաքիս

Մ. Ե.

ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆՔ



ՀԱՐՑՈՒՄ ԹԻԻ 66

... Խմբագրութիւն Հանրագիտակ
օգտաշատ Հանդիսի,

Եօթն ամսու երախայ մ'եմ. անդուծ
ծնողքս զիս տարածամստինքէն բըխ-բըխ
ըլին, միտքս դրի բան չուսել, բայց
պիտի չի կրնամ համբերել անօթի. բըխ-
բըխ եղած ինձ պէս երախաները ինչ
սնունդ կրնան առնել, որ սաամբոսի
խանգարում չունենան:

ՊԵՏԵԼԻԿ ԱՇՈՏԻԿ

ՊԱՏԱՍԽԱՆ

Արդէն ծնողքդ անդթութենէն աւելի
անխռհմութիւն ըրած են, քու այդ հասա-
կիդ մէջ քեզի կաթէն կտրելով: Քու այդ
հասակիդ մէջ ամենէն նպատաւոր, սննդա-
րար և յարմարագոյն պարէնդ պէտք է կազմէ
«կաթը», և մի միայն կաթը և այն ալ մայ-
րիկիդ ստինքներէն ծորած քաղցրահամ կա-
թը: Նախախնամութիւնը ամէն տարիքի պա-
հանջքին համաձայն, սնունդը նախապէս
սահմանած է, բնութիւնը ամենակարող է,
և երբեք կարելի չէ անոր դէմ մաքառիլ:
Երբ բնութեան կամքին հակառակ, տարիքիդ
պահանջքին անհամաձայն սնունդ մ'առնես,
զիտցած եզիր որ ամէն պարագայի մէջ տու-
ածով դու կ'ըլլաս: Բայց վերջապէս՝ քանի որ
ծնողքդ՝ անշուշտ յոխարման մը հարկին տակ,
զրկեցին զքեզ կենսատու սնունդէդ, և անոր
տեղը բռնող սնունդ մը գտնալ կ'ուզես, պի-
տի ջանամ ըստ կարելոյն գոհացնել զքեզ,
պէտք եղած խորհուրդները «Հանրագիտակ»ի
միջոցով ծնողացդ հաղորդելով:

Թէ ե'բ դե'ք է Խմբ. Խմբ. Խմբ. Խմբ.

Ֆրանսայի մէջ վերջին տարիներս օրէնք
մը հաստատուեցաւ, որով՝ բանտարկութեան
և դրամական տուգանքի կը դատապարտու-
ուին այն ամէն ծնողք, որ առանց բժիշկի
հրամանին իրենց զաւակը մէկ տարեկանէն
առաջ կաթէն կը կտրեն:

Երբ կաթնահատութեան համար ֆրան-
սական կառավարութեան կողմէ այսպիսի օ-
րէնք մը կը սահմանուի, կրնանք երեւակայել

թէ՝ մարդկութեան ապագային վրայ, որ
աստիճան ազդեցութիւն ունեցաւ կարեւոր
խնդիր մ'է: Տարածամ կաթնահատութենէ
յառաջ կուգան շատ մը հիւանդութիւններ
և տխուր, որոնք դառն հետեւանքներ կը
ձգեն ապագայ մարդուն յօրինուածակազ-
մութեան վրայ:

Թէ և հարցումը կիսով չափ զուարճալիքի
ձեռով ուղղուած է մեզ, բայց գիտցած եղիք
որ մանկատաճութեան մէջ, ամենէն վեհ-
սական և ամենէն կարեւոր խնդիրն է, որ
կ'արժէ իրմով զրազիլ ամենայն հոգածու-
թեամբ:

Թէ և կրնայինք երկու բառով վերոյիշեալ
հարցման պատասխանը տալ, բայց փափա-
քելով փոքրիկ ծառայութիւն մը մատուցա-
նել հայ մայրերու, պիտի փորձենք խնդիրը
հիմնովին ձեռք առնել, հետեւելով նշանաւոր
մանկաբույժներու խորհուրդին, և թերեւ թէ
մ'ալ իմ անձնական փորձառութեանց:

Ո՛չ միայն մեր՝ այլ մինչև իսկ եւրոպական
յառաջադէմ ազգերու մէջ անդամ շատ մը
մայրեր այնպէս կը կարծեն, որ բնական կա-
թը կուշտ չի պահեր երախան, և զայն անու-
ցանելու համար սննդարար նիւթեր չի պա-
րունակեր իր մէջ: Այս նախադաշարու-
մին վրայ հաւատքնուն չափ ամրապինդ,
շատ կանուխէն կ'ոկոխ ինչձ երա-
խաներուն կարծր սնունդներ մատակա-
րարել, ինչպէս՝ արարօտ, դապեօքա, և շնչ:
Թողլով այս խնդիրը հոս, կ'անցնիմ հարցն-
մին պատասխանը շարունակելու: Նիւթէս
դուրս չելլելու համար, խոստանալով սակայն,
մօտաւորապէս կարեւոր տեղեկութիւններ
տալ այդ մասին ևս Հանրագիտակի ազնիւ
ընթերցողուհիներուն:

Արդէն վերոյիշեալ թիւը կարծիքն է, որ
տեղի կուտայ ընդհանրապէս ժամանակէն
առաջ երախաները կաթէն կտրելու:

Հարկեցուցիչ պարագաներէ դուրս — զոր
օր մօրը հիւանդութիւնը — մայրենի կաթն-
ատութիւնը, պէտք չէ կտրել 12 և մինչև
իսկ 18 ամիսէն առաջ: Որովհետեւ այդ տա-
րիքէն առաջ երբ տղաք կաթնահատութեան
դատապարտուին, նախ՝ իրենց մարմնային
աճումը կ'ըդհատի, և իրենց մատակարար-
ուած կարծր սնունդներու տեղի տուած
գրգռման վարժուած չըլլալով, ինչպէս և ի-

րենց փափակ ստամոքսը անկարող ըլլալով զանոնք մարտել, երբեմն ծանր փտանգներու կ'ենթարկին, և ընդհանրապէս ալ անմարտողութիւններ, գթութեամբարութիւններ, հետեաբար և, անհանգստութիւն, անքնութիւն, մերթ աղէլութիւն, մերթ աղէպնդութիւն, եւն. եւն. յառաջ կուգան: Վերջապէս, որովհետեւ՝ ակույ հանելու ժամանակը, որ երախտներու մէկ գթութիւն և վտանգաւոր անցքը կը կազմէ, և այդ միջոցին մայրենի ստինքները երախտային ամենէն միտիթարական գոհունակութիւնը կը շնորհեն, որու կը փարի արտասովոր եռանդով, և հոն կը գտնէ միայն, այլապէս անկարելի՝ ամենամեծ սիրտանքը, ուստի՝ պէտք է սպասել որ, ակույ հանելու գործողութիւնը բաւական յառաջ գացած ըլլայ, և կամ աւելի լաւը, գրեթէ լրացած ըլլայ. հետեաբար՝ կաթնահատութեան ամենէն յարմարագոյն ժամանակը պէտք է ըլլայ 12, 18 ամսուան տարիքին մէջ:

Այս կերպով՝ երախտն իր առաջին 15 կամ 16 կաթի ակուաները հանած ըլլալով, որոնց դուրս ելլելը ամենէն գթութիւնն է, կը մնայ այն ատեն միայն ետեւի աղօրատամները (սեղան ակուաները, ինչպէս կ'ըսեն ռամկօրէն), որոնք ընդհանրապէս շատ դիւրութեամբ դուրս կ'եկնեն:

Սակայն կաթնտուութիւնը շատ երկար ատեն չարունակելն ալ աղէկ հետեանք չունենար. նախ որ՝ խիստ շատ անգամներ մեծ գթութեամբ կը կտրուին կաթէն երախտները, և երբեմն ալ իրենց տարիքին համապատասխան գոյացական անունք մը չ'ստանալուն, հետզհետէ կը տկարանան:

Կաթնահատութիւնը ինչպէս սկսելու եւ ինչպէս վերջացնելու է. ասոր վրայ խօսելէ առաջ, նախ ըսենք թէ, որովհետեւ հարցումը 7 ամսու տղու մը համար է, այդ տարիքին մէջ միմիայն կաթ տալու է իրրեւ սընունդ, բայց քանի որ մօրը կաթը չպիտի կրնայ առնել, այն ատեն պէտք է դայակի մը դիմել որ, եթէ այս ալ իր գթութեամբութիւնները ունենայ, պէտք է արուեստական կաթնտուութեան դիմել:

Արուեստական կաթնտուութիւն կ'ըսուի՝ տղաքները անուցանելու այն եղանակին որով մօր մը կամ դայակի մը չգոյութեան պատ-

ճառաւ, անոնց կուտան գաւաթով կամ սրբուակով կենդանի մը կաթը, և այս եղանակը կը կոչուի, ծծակով (էմպիկ, պիպլոսոն) մանկատածութիւն:

Կաթնափաճառը առաւօտուն կաթը կը բերէ, բայց ո՞վ գիտէ թէ ինչ տեսակ կենդանի կաթ է. արտադրողը առողջ է, կամ իբր կաթ այլ և այլ նիւթերու խառնուրդ մ'է ծախածը, կամ արուսած է, և կամ աւելի վտանգաւորն ու ահագին, իր մէջ արդեօք հիւժարտի կամ ուրիշ փոխանցիկ հիւանդութեանց սերմեր, մանրէներ՝ կը պարունակէ:

Բոլոր այս տեսակ կաթերով սուրբելու դժբաղդութեան գաղտնաբացում երախտները, քիչ շատ բացատրութեամբ: Կ'ըլլան վտիտ, տկարակազմ և միշտ ստամոքսային հիւանդութիւններէ կը նեղուին, ամենք ոսկրաթեքութենէ կը տառապին, և վերջապէս խիստ շատեր ալ վաղահաս մահով կը վերջացնեն իրենց անբաղդ կեանքը:

(Շար.)

ԱՐԱՔՍ

ՆԱԽԱԿ ԱՌԻԹԱԳՐՈՒԹԻՒՆ

Խմբագրութիւն «Հանրագիտակ» օգտակար Շարաթաթերթի:

Յօգուտ հայ դերձակութեան՝ հաճեցէք Ձեր հանրօգուտ «Հանրագիտակ»ի մէջ անկիւն մը շնորհել ու ներկայ գիրս Մ. Գալէնտէր էֆէնտիի ուշադրութեան յանձնարարել:

Հանրագիտակի վայելչագործութեան բաժինն միայն իգական սեռին յատուկ պիտի ըլլայ, թէ երկու սեռին միանգամայն:

Թարգանթ

«Հանրագիտակ»ի Ընթերցողներէ
ԳՐ. Յ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ԲԱՅ ՆԱԽԱԿ

Մեծ. Մեքրոն էֆէնտի Գալէնտէր

Հեղինակ և Հրատարակիչ «Յւայ»ի

Գրեթէ 10 տարիներ առաջ հրատարակած Ձեր պատուական հեղինակու-

Թիւնն «Եւա կամ Ուղեցոյց Իգական Սեռի Ձեւագիտութեան» մեծ ընդունելութիւն գտած էր ժողովրդեան ստուար դաստիարակէն, և որչափ ուրախ եղաւ իգական սեռն, տեսնելով Ձեր այդ հըմտալից աշխատութիւնն. ակնյայտնի և անբացատրելի էր այդ ցնծութիւն, իրենց շնորհակալիքը յայտնելու համար՝ թերեւս չէին կարող գտնել բառ մ'իսկ:

Ձեր համբաւն տարածուեցաւ ամէն կողմ, ամէն դերձակ անհատի շրթանց վրայ կ'պտտի Ձեր անուն և ամէն օր այդ հանրօգուտ հեղինակութեան վրայ կ'խօսուի և պիտի շարունակուի խօսուիլ որչափ ատեն որ այդ արհեստ կանգուն կ'մնայ:

Յառաջաբանին մէջ անդ մը կարդացինք որ մօտաւոր առթիւ հրատարակելի ունիք՝ նաև «Ագամ»ն, արական սեռի յատուկ:

Որքան հրճուեցան դերձակ աշակերտներն, երբ իրենց ապագայն՝ այդ հմտալից աշխատութեամբն՝ բարւոքուած տեսնելու յոյսն իրենց մէջ արծարծեցաւ. վասն զի իրսւամբ պատուար մը եղած պիտի ըլլաք «վարպետի» աւանդական դրութեան յառաջխաղացման:

Եւ յիշաւի, կա՞յ արդեօք աշխարհի վրայ՝ իւրովսանն մարդկութեան օգուտ կար հանդիսանալէ աւելի՝ մարդասիրական և վսեմ գործ մը, գործաւորի մը՝ իրեն գործին գաղտնիքը հրապարակել (որն որ իւր կեանքին տպահովութիւնն է) որպէս զի իւր արիւնսակիցներն և իր արհեստակիցներն միանգամայն օգտուին ու յառաջադիմեն նոյն այդ գործին մէջ:

Դերձակի մը քով աշխատող մ'ըլլալով, կուգամ այսօր խնդրել և աղաչել Պատ. Հանրագիտակի միջոցաւ որ, որչափ կարելի է, նոյն այդ ազգօգուտ հրատարակութիւնն (Ագամ) մօտաւոր առթիւ մը հրատարակէք, և մենք կանուխ տեսնելու բարեբաղդութիւնն ունենանք այն նոր ԱԴԱՄ-ն, որն որ լոյս պիտի ծագէ դերձակաց խանութներն... և պիտի

վերցունէ այն անհամար «քանակներու» բաղմունքիւնն՝ որոնք պատերը լեցուցած են, (և յառաջարաննուդ մէջ ցաւ ի սիրա գրելու համար Ձեզի նիւթ մատակարարած):

Ինչպէս նախորդին մէջ, նոյնպէս եւ այս գրքին հրատարակութիւնով Ձեր անունն անմահացուցած պիտի ըլլաք եւ մենք՝ ձեր նուտոտ աշակերտներն՝ իբրեւ հոյր պիտի պատուենք, և իբրեւ «Մեկնոս Դերձակաց» պիտի յարգենք զՁեզ, որչափ որ զՁեզ անձամբ ճանչելու բարեբաղդութիւնն ալ ունեցած չըլլանք:

Իզմիտ

Դերձակ դասու սաներէն
ՄԵԿԸ

ՃԱՐՏԱՐԱՐՈՒՆԵՍՏԱԿԱՆ

ՆԵՐԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԲԱՄՊԱԿԻ ՎՐԱՅ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԱԶԴԱԿՆԵՐՈՒ
ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԸ

(Շ-բ-ն-ի-թ. 7-ի-թ- 38 և- 39)

ՊԱՀՊԱՆՈՒՄ. — Բամպակը իր մաքրութեան և անարատութեան շնորհիւ, առանց սղալլելու կրնայ երկար ատեն մթերանոցներու մէջ պահուիլ, մանաւանդ եթէ ձերմկցնելու գործողութեանց ենթարկուած է, և պահուած տեղն ալ չոր է: Բայց երբ յօրինուածային օտար նիւթեր գտնուին իր վրայ, զոր օր. օղայ, խէժ ևլն:—Ինչպէս՝ յարգարուած և անթափ (տնլուայ) բամպակեայ պատառներու ևլն. ի վրայ — և խոնաւ ու տաք մթնոլորտի մը մէջ դրուած է, տակաւ իր դիմացկունութիւնը կը կորսուենցնէ, և հետզհետէ կը վթարի: Այս վթարումը յառաջ կուգայ տեսակ մը մանրէսունկի ազդեցութեան տակ, ծնունդ տալով մասնաւոր բորբոսումի մը: Մանրէսունկը կ'աճի և կը ծաւալի օղային կամ իր նմաններուն շնորհիւ,

որոնք բաղադրուածուելով մանրէստեղծութիւն սնունդ-
եան նիւթ կը մատակարարեն՝ երբ տեղւոյն
խոնավութիւնը և տաքութիւնը նպաստաւոր
է. քիչ ժամանակի վերջը բարձրագոյն միջնա-
բամպակի թելերուն մէջ թափանցելով կը
փառնեն զանոնք:

ՍԱՌՈՒՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ. — Այն-
պէս կը կարծուի թէ խոնավ բամպակեղէն-
ներու թելերը սառնոյցի ազդեցութեան տակ
կը տկարանան. բայց սխալ է: Թելին սա-
ռնոյման մէջ բամպակի թելերը կարծրու-
թիւն մը ստանալով կոտորուելուն համար է
որ այդպէս կը կարծուի: Բայց միւսնայն ան-
պատեհութիւնը կ'ստանայ՝ բամպակը նաեւ,
երբ օսլան կամ խէժը չափազանցօրէն գոր-
ծածելով, արտասովոր կարծրութիւն մը ստա-
նան իր թելերը:

ԹԹՈՒՆԵՐՈՒ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ. — Հան-
քային թթուները, զոր օր. ծծմբային, ջրա-
քլորային, ևայլն, երբ սղաղ և ջրախառն վի-
ճակի մէջ կը գտնուին, գրեթէ ազդեցու-
թիւն չեն ունենար բամպակին վրայ.
բայց երբ բամպակին վրայ չորնան, աստի-
ճանաբար խտանալով և զօրանալով, թելերը
կ'այրին և կը տկարացնեն: Այս միւսնայն այ-
րեցողական ներգործութիւնը յառաջ կուգայ
երբ բամպակը նոյն ջրախառն թթուներու
մէջ թաթիւելով տաքցուի, կամ ջրաքլորային
թթուի կալին ազդեցութեան ենթարկուի:

Զօրաւոր թթուներու ներգործութիւնը
չափ կը տարբերի իրենց բնութեան, խտաց-
ման աստիճանի բարեխառնութեան, ինչպէս
և քիչ կամ չափ ժամանակ բամպակի թելե-
րուն հետ հաղորդ գտնուելէն:

Վերին աստիճանի խտացման մէջ գտնը-
ւած ծծմբային թթուն (զած եռալի) բամպա-
կը կ'ուռեցնէ, և մածիտային (թութգալի
պէս) զանգուածի մը կ'այլափոխէ: Այդ զան-
գուածին վրայ երբ քիչ մը ջուր աւելցնենք,
օսլայի նմանող նիւթ մը զատուելով յատակը
կ'իջնայ, որ կը խոչուի օսլայակերպ (amyloide):
Մանիշի (iode) լուծուածք մը այս վերջի նիւ-
թը կապոյտի կը ներկէ:

Թթուները՝ բամպակին և հանքածուխի
խայծղանէն արտադրուած աղային ներկերու
միացումը կը դիւրացնեն, մինչև իսկ եթէ
ջրախառն ըլլան այդ թթուները: Երբ զօրա-
ւոր թթուով մը բամպակը ամբողջովին լու-

ծենք, չորցնելէն վերջ խիստ բարակ փշիկ
մը վերածուի, և այդ վիճակին մէջ, բուն
խորշանիւթէն (սէլլուզ) մէկ շամանդաւ ա-
ւելի ջուր կը պարունակէ իր մէջ, և կը կոչ-
ուի ջրային խորշանիւթ (hydrocellulose):

Եթէ խտացեալ ծծմբային թթուի ազդե-
ցութեան տակ երկար ատեն ձգուի բամպա-
կը, այն ատեն աջարտուլի (dextrine) C_6H_{10}
Օձ, եւրոպական երմուկ = իրմիկ) կ'այլափո-
խի, և հալելու յատկութիւն մը կ'ստանայ:

Երբ վերջիշեալ լուծուածքը ջրով խառ-
նենք և կրակի վրայ քիչ մը ժամանակ եռա-
ցնենք, աջարտուլը քաղցրանիւթի (glucose,
 $O_6H_{12}O_6$) կը փոխուի:

Եթէ բամպակը խտացեալ բորակային թթ-
ութիւն (քէլապ acide azotique) հետ տաքցը-
նենք, ամբողջովին կը բաղադրուի, և յա-
ռաջ կը բերէ թրթնջկային թթու (ստիտ օք-
սալիք) և տեսակ մը օքսիտացեալ խորշա-
նիւթ, որ դիւրաւ թեամբ կը լուծուի ալքալի-
ներու (քօթաւ, սօտա, ևլն) մէջ:

Խտացեալ ջրաքլորային թթուն բամպակին
վրայ կ'ազդէ ծծմբային թթուին պէս, բայց
նուազ ուժով:

Եթէ բամպակը պարզապէս տորոպային,
լեւնանային, թրթնջկային թթուներու (ստիտ
թաթիւք, սիթիւք, օքսալիք) լուծուածքին
մէջ թաթիւի, ու է խաթարում յառաջ չի
գար: Բայց երբ 100ին 2 վերի թթուներուն
մէկը պարունակող լուծուածքի մէջ խել-
մենք, չորցնենք և 1 ժամու չափ հարիւ-
րարդի 100 աստիճան բարեխառնութեան մէջ
տաքցնենք, այն ատեն բամպակի թելերը
թեթեւ կերպով կը տկարանան:

Քացախային թթուն, սովորական պարա-
զաներու մէջ գրեթէ կարեւոր ազդեցութիւն
մը չունի բամպակին վրայ:

ԱԼԲԱԼԻՆԵՐՈՒ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ. — Կիզո-
ղական կալիի և նատրոնի (քօթաւ և սոտ
քօթիւք = քօթաւ կամ եագըճը սօտա) տկար
լուծուածքները պաղ եղած ատենին, ընդ-
հանրապէս բամպակին վրայ ազդեցութիւն
մը չեն ընեն: Բայց երբ փոխնի փոխ բամ-
պակը այդ լուծուածքներէն մէկուն մէջ թաթ-
իւելով օգին ազդեցութեան դնենք, և այս
իրարու ետեւէ մէկ քանի անգամներ, այն ատե-
ն բամպակի թելերը կը տկարանան: Մին-
չև անգամ, մէկ քանի ժամեր չարունակ կա-

րելի է բամպակը այդ կիզողական ալքալիններու թեթեւ լուծուածքին մէջ եռացնել, առանց ունէ անպատեհութեան: Բայց լուծողութիւն ընելու է որ բամպակը ամբողջովին լուծուած քին մէջ ընկզմած ըլլայ, որովհետեւ՝ հակառակ պարագային մէջ թելերը կ'աւրուին, մանաւանդ՝ երբ լուծուածքէն դուրս մնացած մասերը միւսնոյն անգամ չոգիւր ազդեցութեան ալ ենթարկուած ըլլան:

Վերոյիշեալ տեսութենէն կը հետեւի որ, բամպակեղէնները ճերմկեցնելու դործողութեանց շարքին մէջ, ուր որ այդ ալքալեան լուծուածքները կը գործածուին, բամպակեղէնները տառնց մէջ լաւ ընկզմած ըլլան, և երբեք դուրս մնացած մասեր չունենան: Տարակոյս չի կոյ որ, այս պարագային մէջ, թելերու տկարացումը օքսիտացումի հետեւանքն է, այսինքն՝ օդին մէջ դառնուած թթուածինին հետ միտնալով, այս միացման պահուն թելերը կամաց կամաց կ'այրին: Չի մոռնա՞ք սակայն ըսելու թէ, այս օքսիտացումէն յառաջ եկած թելերու յօրինուածային խաթարումը, ինչ որ տկարացում անուանեցինք վերը, և այդ խաթարումէն բամպակը իր յատկութիւնը մասամբ մոխրելով կը վերածուի օքսիտացեալ խորշանիւթի (oxy-cellulose) և նպաստաւոր միջակ մը կ'ստանայ, հանքածուխի խոյճղանէ արտահանուած հիմնաղային (basique) գոյները իւրացնելու, կամ անոնց հետ սերտիւ միանալու: Ուշագրաւ և կարեւոր կէտ մ'է ասիկա, ուրիշ ներկարարները կրնան մեծ օգուտներ քաղել ի պահանջել հարկին:

Կիզողական կալիի կամ նատրոնի խտացեալ լուծուածքներու ազդեցութիւնը նշանակութեան արժանի է: Եթէ մէկ քունի վայրկեան միայն, կիզողական նատրոնի խտացեալ լուծուածքի մը մէջ, որու տեսակարար ծանրութիւնը հաւասար ըլլայ 1,25ի (100 մաս ջուրին 16 մաս նատրոնի հաշուով), բամպակեղէն հիւսուածք մը (խասա, ևլն) ընկզմանք, այս վերջինը մածիւտային յատկութիւն մը կ'ստանայ, և կ'իստով չափ լուծանցիկ կ'ըլլայ: Յետոյ՝ նատրոնը վրայէն հանելու համար երբ առատ ջուրով լուացուի, հիւսուածքը կը քաշուի և կը սեղմուի արտասովոր կերպով:

Կիզողական անուշադրը (Ամոնիաք քոս-

թիք = եագըճը կամ քէսկին նշատըր լուհու) ինչպէս և կալիի, նատրոնի և անուշադրի ընածիւտները, և նատրոնի կայծքարաւը (սիլիքատ ալ սղւտ), սակերոյակը (պօրաքս = թէնէքար), օճաւը, սովորական պարագաներու մէջ, բամպակին վրայ ունէ ազդեցութիւն չունին:

(Շար.)

Ղ. ԲՈՒՆՏ

Հետեւեալը զրկուած է մեզ հրատարակութեան համար, զոր շահեկան գրանելով, «Հանրագիտակ»-ի ներկարար ընթերցողաց ուշագրութեան կը յանձնենք:

..... Ուրագրութիւն,

Օգտաշատ «Հանրագիտակ»-ի 38րդ թրւայն Դ. է. Ֆ. Շահինեանի յօդուածին սոյն «Մասնաւոր ներկարարներ որոնք լեղակ (չիլի, սիւտ մալի) կը ներկեն, բայց իրենց արուեստին գողտնիքը ոչ մէկու մը կը յայտնեն» տողերն ելը կարգացի, կապոյտ ներկելու համար հետեւեալ բազալթութիւնն ու եղանակը յիշեցի, զոր շատ կանուխ հրատարակուած «Յաւերժահար» անուն կրտսմսեայ հանդէսին մէկ թերթէն նոյնութեամբ ընդօրինակելով բաւական տարիներէ ի վեր պահած էի: Խիստ գոհ պիտի մնամ երբ ի յիշատակ «Յաւերժահար»-ի, բարեհաճիք արտասուել անոր արհեստական տողերը Ձեր լրագրին մէջ:

ԱՌԱՆՑ ԶԻՎԻՏ ԳՈՐԾԱԾԵԼՈՒ ՄԱՎԻ ԿԱՄ

ԶԻՎԻՏԻ ՆԵՐԿԵԼ

Այս գեղեցիկ գոյնը ներկելը շատ դիւրին և շատ աժան է:

Պէտք եղածներն ասոնք են.

- Ա. Տէմիր սիրքէսի (պատրաստ չեն ծախեր).
- Բ. Բրուսիաթ տը Բօթաս (դեղին տը մ'է).
- Գ. Չաճ ետղը (տիւմանը չ'ըլլար).
- Դ. Շապ.

Քէսկին քացախի մէջ տէմիրի կտորներ, չիլի ևւոյն լեցուր. 5-6 օր մնայ. երբեմն երբեմն խառնէ, քիչ մը տաքցնես նէ առաւել աղէկ է. սիւզմիչ ընելէդ ետքը աս ջուրը որն որ կ'ըլլայ տէմիր սիրքէսի:

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ.

Նախ ներկեւում կտաւը ջրով լուա, և աս «տէմիր սիրքէսին» ին տուրումիւն եղածին մէջ պաթըրմիւն ըրէ, սխմէ ու փռէ որ չորնայ 10-12 ժամ անցնելէն ետքը աղէկ մը ջրով լուա:

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ.

Կէրտէլի մը կամ մաստէլայի մը մէջ, կը տաւդ բոլորովին թրջեւում չափ ըլրծախ ջուր լեցուր. 40 տրամ դեղին Բրուսիաթ տը Բոթաւը դիր, և 8 տրամի չափ «վաճ եաղը» լեցուր, խառնէ որ էրիմիւն ըլլան. և պատարաստած քացախը կտաւդ տուր մէջ խոթէ, 15 թաքիքէ գործէ, հանէ 10 տրամ շապը թէքնէ մը ջրի մէջ դիր, և կտաւդ պայաղի ջրով լուալէդ ետքը աս շապը ջրով լուա, արեւ չեղած տեղ մը չորցուր, որ կ'ըլլայ այս գոյնը:

Եւ թէ որ տահա խոյի կուզես պոյամիւն ընել նէ, շապը ջրով չլուացուած, կրկնէ երկու գործողութիւնն ալ. այս անգամ 80 տրամ բրուսիաթ տը բոթաւ, և 10 տրամ վաճ եաղը դիր, որ կ'ըլլայ այս գոյնը:

Քանի անգամ որ տէմիր սիրքէսին մէջ խոթես հանես, ու բրուսիաթ տը բոթաւը ջրին մէջ խոթես, այնքան խոյի կ'ըլլայ, էն սօնը շապը ջրով լուալու չորցնելու է:

Յ-է-է-է-

Ես ներկարար չեմ, անոր համար չուղեցի որ ծածուկ մնայ «Յաւէրթահարս» էն ընդօրինակածս: Շատ ուրախ պիտի ըլլամ եթէ կապոյտ ներկեւում վերագրեալ եղանակէն օգտուողներ գտնուին:

Նիկոմիդիա

Ա. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Կը խնդրուի մեր Պատ. Գործակալութիւններէն և Յարգոյ Բաժանորդներէն, որ բարեհաճին նոր Տարիէն առաջ յետնեալ բաժնեգիրները ղրկել: Այս առթիւ կը յիշեցնենք նաեւ մէկ քանի բաժանորդաց այն խոստումները, զորս ըրած էին նամակով, քիչ օրէն իրենց բաժնեգիրը ղրկելու մասին:

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

Թ.

ՕՂԵՐԵԻՈՒԹԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՅՐՏՈՒԹԻՒՆ

Յուրտ եղած ատեն, երբ հողին մակերեւոյթին վրայ գտնուած ջուրը կը սառի, միեւնոյն ժամանակ բոյսին մէջ գտնուած ջուրի փոքր քանակութիւնը կը սառի. այդ ջուրը — ինչպէս նաեւ հալածը — բացառաբար՝ սառեալով իր տարածականութիւնը կը միացնէ ու այսպէս բոյսին մէջ գտնուած բջիջներն ու անոնցմէ կազմուած խողովակները կը կոտորուէ ու բոյսին մահը չուշանար վրայ հասնիլ:

Ձմրան ցուրտերը այնքան մեծ վնասներ չ'են հասցներ մշակուած բոյսերու եւ ծառերու վրայ. որովհետեւ այս ցուրտերէն հետեւող սառումը տեղի կ'ունենայ այն ատեն երբ արդէն բոյսերը չ'են աճիլ ալ տեսակ մը քունի մէջ են. նոյնպէս շատ անգամ ձմրան մէջ բոյսերը սառման դէմ կը պաշտպանուին ձիւնի խաւով մը:

Սակայն գարնան՝ սառնամանիք բոյսերու վրայ շատ գէշ եւ աղէտալի հետեւանքներ կրնան ունենալ, որովհետեւ բոյսը գարնան մէջ սնուցիչ նիւթով սղողուած ըլլալով՝ շատ դիմացկուն չ'է եւ ուրիշ ցաւալի կէտ մ'ալ եթէ կայ, այն ալ այս ժամանակ ձիւնին չը գտնուիլն է: Գարնան սառումի հետեւանքը այնքան աղէտալի կ'ըլլայ որքան որ հալումը շատ տեղի ունենայ: Սառումէ մը անմիջապէս վերջ եթէ արեւ ելլէ, գրեթէ վայրկեանապէս բոյսը կ'ապականի, կը փոփ. ծառերէն ծաղիկները կը թափին, տերեւները կը չորնան ու կ'իյնան. նոյնպէս չարունակելի սառումը և հալումը կը կորկամին և կ'ընդլայնին յաջորդաբար հողին մասնիկները. այսպէս որ շատ անգամ բոյսերուն արմատները կը կոտորին կամ հողէն դուրս կը մնան:

Գարնանային սառումին առաջին առնելու համար շատ մը միջոցներ կան զոր պարզած ենք ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ մէջ (տեսէք Հանրագրութաւի 18 թիւ մեր յօդուածը «Եղեամ եւ Գարնանային Սառո մ»):

Ա Մ Պ

Տաքութեան շնորհիւ ամէն վայրկեան ծովերու, լիճերու, գետերու ջուրերը կը շոգի-անան և կը կազմեն ջուրի շոգին, որուն վրայ պէտք է նաեւ՝ աւելցնել կենդանիներու և բոյսերու արտաշնչած ջուրի շոգին: Ահա մեծ քանակութեամբ ջուրի շոգին օդէն թեթեւ ըլլալով մթնոլորտին մէջ կը բարձրանայ և հոն ֆիզիքական այլևայլ երեւոյթներու ազդեցութեամբ կը խտանայ և կը կազմէ ջուրի փոքրիկ կաթիլներ որոնք կը կազմեն ԱՄՊը. այս ամպն է որ ցութիւնն սաստկութեան համեմատ և կամ մթնոլորտին ելեքտրականութեան ազդեցութեան շնորհիւ ծնունդ ախտի տայ անձրեւի, ձիւնի, կարկուտի, ցօղի, եղեամի, մէգի և այլն և այլն:

Ինչպէս բոլոր կենդանիները, նոյնպէս ալ բոյսերը կը շնչեն. արդ ջուրի շոգին շնչառութեան մէջ մեծ դեր կը խաղայ. եթէ ունէ պատճառաւ ջուրի շոգին պակսի, կենդանիներու շնչառութեան խողովակներուն մէջ տեսակ մը խտնապակում, ցաւ յառաջ կուգայ, նոյնպէս ջուրի շոգին մեծ մասամբ օդը կը զովացնէ, կենդանիներու և բոյսերու արտաշնչութիւնը կը չափաւորէ, հոգը խոնաւ կը պահէ և վերջապէս հեղուկի վերածուելով յառաջ կը բերէ այն ջուրը առանց որու կեանքը անկարելի պիտի ըլլար երկրի վրայ:

Երբ ջուրի շոգին հեղուկ կամ կարծր վիճակի մէջ երկիր կը վերադառնայ, անմիջապէս մէկ մասը կը շոգիանայ. երկրորդ մաս մը հողին ծծմամբը երկրի խորերը կը թափոնցէ ուր կը կազմէ ջուրի ենթահողային աւազաններ, որոնք ծնունդ կուտան ակերու. ասոնցմէ պիտի կազմուին վտակներ, գետեր, լեռներ, ծակեր և այլն, որոնց ջուրը կրկին շոգիանալով դէպի մթնոլորտ պիտի վերադառնայ և այսպէս շարունակաբար գիշեր ցերեկ ջուրի այս շրջանը տեղի կ'ունենայ:

Վերջապէս երրորդ մաս մը՝ բոյսերու սընունդը կազմող տարրերը իւր մէջ լուծելով՝ բոյսերու մէջ կը մտնէ որով իբր անդրուվար (vohicule) կը ծառայէ. արդ բոյսերուն մէջ գտնուած ջուրի մէկ մասը արտաշնչութեամբ օդը կը ցնդի, իսկ մնացեալը (հարիւրին 10-90 ըստ բոյսին տեսակին) ուշ կամ կանոնաւ շնչառութեամբ (կենդանային այրում) կամ

բոյսին շորնալովը կրկին օդը կը վերադառնայ:

Ա Ն Ձ Ր Ե Ի

Անձրեւը յառաջ կուգայ ինչպէս ըսինք ամպը կազմող ջուրի շոգին խտացումէն: Յիրաւի եթէ երկինքը պայծառ ըլլայ, շատ լաւ գիտենք որ անձրեւ չի տեղար. ու՛ր անուրանալի է թէ անձրեւ տեղացած ծամանով միշտ երկինքը ամպամած է: Բայց կը պատահի՞ որ երկինքը ամպերով ծածկուած ըլլայ ու անձրեւ չի տեղայ. այո՛ւ այս ալ շատ անգամ կը պատահի, որովհետեւ հոգերու ուղղութիւնը անձրեւին վրայ մեծ ազդեցութիւն ունի. օրինակի համար հիւսիսային և արեւմտեան հոգերը անձրեւաբեր են: Նոյնպէս ծովեզերեայ կլիմաներու մէջ աւելի կ'անձրեւէ քան ցամաքային կլիմաներու մէջ. դարձեալ ձորերուն, հովիտներուն մէջ անձրեւը համեմատաբար քիչ կը տեղայ. իսկ լեռներու և անտառներու վրայ աւելի կ'անձրեւէ: Ուրեմն ամէն երկիր իր դիրքին, բարձրութեան, կլիմային համեմատ տարբեր քանակութեամբ անձրեւի ջուր կ'ստանայ. իբր օրինակ տանք քանի կ'ըն տեղերու մէկ տարուան մէջ տեղացած անձրեւի քանակութեանց միջին թիւերը:

Բարիւ 0,50 մեթր, Ռէն գետին եզերքները 0,57, Վօթի լեռներուն վրայ 1,15, Նանսի 1,05, Մօնթէլիէ 0,80. Մարսիլեա 0,50, Պոուտո 0,78, Սլրապուրկ 0,88, Սէվէն լեռներուն վրայ 1,80, Ժընէվ 0,82, Քոլմպիա 2,54, Վէրա - Քրուզ 4,27, Հնդկաստան (մի քանի տեղեր) 12,00, Քօլօրա-տո (մի քանի տեղեր) 0,05:

Այս ցուցակէն կրնանք հետեւցնել թէ տարբեր երկրներու կլիմաներու մէջ շատ տարբեր քանակութեամբ անձրեւ կը տեղայ, բայց մեր երկիրներուն մէջ այսինքն բարեխառն կլիմաներու տակ ընդհանրապէս կէս մեթր անձրեւ կը տեղայ, իսկ լեռներու վրայ մինչև մէկ կամ մէկ ու կէս մեթր անձրեւ կուգայ:

Պէտք է աւելցնել նաեւ թէ մէկ տարուան մէջ տեղացած ջուրի քանակութեան մեծութիւնը շատ չափեր բոյսերու վրայ, այլ անձրեւոտ օրերու շատութիւնը. յիրաւի Այրեցեալ գօտիին տակ 6 ամիս կ'անձրեւէ և

կը կազմէ « խոնաւ եղանակը » . իսկ 6 ամիս ալ բնաւ անձրեւ չի տեղար և կը կազմէ « երաշտ եղանակը » : Արդ՝ երաշտ եղանակին մէջ երկիրը բնական անապատի մը կը վերածուի և բուսականութիւնը մեծ մասամբ կը դադրի :

Երկրագործական տեսակէտով պէտք է որ անձրեւը քիչ տեղայ , բայց ստէպ , որպէս զի ջուրը կարող ըլլայ հողին մինչև փոքրը թափանցել , ուր պէտք եղած ժամանակ բոյսին արմատները պիտի երթան փնտռելու իրենց անմահ պէտք եղած ջուրի քանակութիւնը : Եթէ չարունակարար անձրեւ տեղայ , մի քանի օրէն հողը պիտի յագեցնայ և մնացեալ ջուրը հողին մակերեսայթին վրայ պիտի վազէ :

Աղիւլի
(Երբեք-Երբ)

Մ. Կ. ՄԱՆԱՔԵԱՆ

ԲԺՇԿԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ԾԱՆՐ ԴԱԼԿԱՍԵՆ

Ահա մահառիթ բայց բարերապաշարար հաղուադէպ հիւանդութիւն մը , որ ցաւ է ըսել յաճախ կտնանց կը վիճակի քան թէ տրանց , ընդհանրապէս 20—30 ամեայ հասակի մէջ , մանաւանդ զեղիութեանց , վիշտերու , վրկանքներու , և կոնխաւոր հիւանդութեանց ազդեցութեամբ վատուածացած անձերու :

Նախորդ յօդուածով յիշեցինք թէ ծանր էպիլեպսիայի պարզ տեսակի ախտանշաններով երեան կուգայ : Այս պարագային կարելի է որ դարմանող բժիշկը խաբուի և չկարենայ պանագանել հիւանդութեան տեսակը , և կամ երկրպայութեան ու տարակուսանքի մէջ մընայ , մինչև որ ծանր տեսակի իսկական ախտանշանները իյայտ գտն : Մէկ խօսքով , յիշեալ հիւանդութեան սկզբնական ախտանշանները շատ նենգապատիր են :

Սոյն հիւանդութեան ընթացքը երկու շրջանի կը բաժնուի . առաջին շրջանին մէջ ի

սկզբան հիւանդութիւնը կ'երևի ուժգին տարտուռով մը , ընկերացած սաստիկ կարածութեան մը , բուսն ուժաստատութիւն մը , անքունութիւն մը , ախորժակի պակասութիւն մը , ողնայարացաւի մը , ստամոքսի խառնուրդի և փոխուսի մը :

Այս տագնապալից և դժնդակ սկզբնաւորութիւնը շատ քիչ անգամ կը պատահի : Ընդհանրապէս հիւանդը ընդհանուր կտրածութենէն , անդամներուն մէջ զգացած ցաւէն , ուժաստատութենէն կը տրտնջայ , վերջապէս կարգ մը աճիւղիակի նշաններ որոնք կ'ախտի և կ'ամ ժանտաւանդի սկզբնաւորութիւնը կը յիշեցնեն : Այս շրջանը որոշ սահման մը չունի , երբեմն շատ կարճ կը տեւէ , աննշարեկ ըլլալու տարածան , և երբեմն ալ շատ երկարատե կ'ըլլայ : Յետոյ երկրորդ շրջանը կը յաջորդէ , յորում հիւանդին տկարութիւնը կը յառաջադիմէ , ջերմաստիճանը կ'աւելնայ , և դէպի եօթերորդ ութերորդ օրը դադկախոր իր գէմբը ցոյց կուտայ : Ահա այս երեւման վայրկեանէն ետք զխառնարար երեք տեսակ ախտանշաններ կ'նշարուին , որոնցմէ առաջինը պարզ դադկախոր ախտանշաններ , երկրորդը արիւնահոսում , և երրորդը՝ ջրային տագնապներն են : Եւ որովհետեւ պարզ դադկախոր ախտանշաններուն վրայ խօսելու առիթն ունեցանք . աւելորդ կ'համարինք վերստին անդրադառնալ : Գալով արիւնահոսմանց ատենք ալ հիւանդութեան ընթացքին վերջերը կ'պատահին , եւ ամենէն աւելի ռնգային հոսումները յաճախ տեղի կ'ունենան ասկէ զատ նաեւ մարմային , ստամոքսային , ընդերային և լինտրային արիւնահոսումներ , կ'տեսնուին : Ուրիշ արիւնահոսումներ վրայ օր . տեսաւտեութիւնը շատ հազուադէպ են : Վերանշանակեալ արիւնահոսումները կ'ըսուի թէ արեան լուծեալ վիճակէն առաջ կուգան , այսու հանդերձ մանք ալ պատճառը մաղձին արեան հետ միախառնման կ'վերագրեն , միտք մը՝ որ այսօր ի սպառ մերժուած ու լքուած է , վասն զի միւսեւոյն արիւնահոսական ախտամիտութիւնը ուրիշ հիւանդութեանց (սե ծաղկախոր , ժանտախոր ևն .) մէջ ալ կ'պատահի , առանց արեան մէջ մաղձ գտնուելու :

Գալով ջրային խանգարմանց , ատենք կամ գրգռման վիճակի և կամ ջրաթուլեկան վի-

ճակի մէջ ի յայտ կուգան. առաջին վիճակին մէջ կ'ընթացան թեթև դառանցանք, զըժուարաշնչութիւն, քնատութիւն, զգայունութիւն, չրթանց Գոլդշտեյն, ձգաններու ցնցում և ջղային սասանում. իսկ երկրորդ վիճակին մէջ, քնէութիւն, ընդարմացում, թմրութիւն և զգայազրկութիւն: Այս գրգռական և ջղաթուլական տազնապնդերը կամ կ'միտարանուին և կամ իրարու կ'յաջորդեն առանց որչափ կանոնի մը հպատակելու, միայն թէ յաճախ ջղաթուլական ախտանշաններն են որ նախ և առաջ երեւան կուգան և ապա գրգռութեան ախտանշանները:

Նաեւ սոյն հիւանդութեան ախտանշաններէն են լիարդի ներգեւումը (atrophie) և փայծաղի (տալաք) ծաւալումը (hypertrophie): Այսու հանդերձ չ'մոռնանք նաեւ ըսել թէ լիարդի ներգեւումը կ'տեսնուի նոյնպէս լուսածինով, զառիկով, չիկատակով թոււնաւորեալներու վրայ, ու նաեւ քաղցածիւ հիւանդութեանց հետեւանքով, օրինակի համար ժանտախտի, թոքատալի, թոքախտի:

Յիշեալ ախտը երբեմն առաջ կուգայ նախատրամադրիչ պատճառներու ազդեցութեամբ, որոնցմէ են յղութիւն, ալքոլանոլութիւն. մի՞ զարմանաք եթէ ըսեմ նաեւ շատակերութիւն: Հարկ է նաեւ ըսել թէ ծանր դալկախտը երբեմն համաճարակ երեւոյթ մը կ'առնու, ու իր աւերը մէկ շարժուման մէջ կ'գործէ ընդհանրապէս:

Գալով դարմանին, ամենէն լաւը և խելացիութիւնը՝ ժամ առտը բժշկին դիմելն է, որ կատարած քննութենէն վերջ նախ պիտի պատուիրէ ձեզ միմիայն կաթ խմել կարելի եղածին չափ առատ, և յետոյ պիտի փութայ ձեզ տալ մաքրողական դեղ մը, և ապա մզկցոնցիլ և աղիքները հակառակելու յատկութիւնն ունեցող ուրոյն դեղեր, իսկ ջղային գրգռմանց համար հանդարտեցուցիչ դեղեր, արիւնահոսեմներն ալ դադարեցնելու համար թթու ըմպելիներ, (պարզ լիմոնատ) նաեւ մարմինը վատուածութենէ փրկելու համար կազդուրիչ դեղեր:

ՄԱՏԱԹ

ՇԵՐԱՄԱԲՈՒՄՈՒԹԻԻՆԸ

ԲԱՍԴԵՌՈՒԵԱՆ ԴԻՈՒԹԻԻՆՈՎ

Հիտարութիւն մտնողիտակաւ
գերընտրութիւնով

Պեպեզիա (Pébrine, Գար-թուպան)

(Շարուն-խալի-տի-թի- 38)

Մասնաւորելով մեր խօսքը Թուրքիոյ Հերամարութեան վրայ, երբ կը փախաքինք զայն բարդաւած վիճակի մը մէջ դնել, մեր ուժը հաւաքելով, լաւ հունտեր հասցնել ջանալու ենք: Առ այս՝ հիտարութիւնը պէտք է սահմանափակել այն դառաններու մէջ, որոնք իրենց կլիմայով, դիրքով և հողով նպաստաւոր վիճակի մը մէջ կը գտնուին, և չերամարութեան ընդարձակ և կարեւոր դառաներէ ալ, ըստ բաւականին հեռի են: Երկրորդ՝ կատարել միշտ փոքր քանակութեանց վրայ, որպէս զի՝ ամեն կարելի ու չադրութիւն և խնամք չ'խնայուին: Այս կերպով ահա, միանգամ ընդ միշտ հիւանդութեան առաջքը կ'առնուի, և ամէն տարի Թուրքիոյ չերամարոյծները պէտք եղած քանակութեամբ հունտ տրամադրելի ունենալէ զատ, արտասահման ևս արտածելու չափ արտոնաստ հունտեր կրնան ունենալ:

Այն գաւառները որոնց մէջ չերամարութեան ծաւալած է, և շատեր մեծ քանակութեանց վրայ կրնան իրենց տածումը, լաւ հունտ հասցնելու մասին անպայման պայմաններու մէջ կը գտնուին. քանի որ՝ հիւանդութիւնը փոխանցիկ բնութիւն մ'ունի, և այս պատճառաւ միլիոնաւոր մարմնիկներ հեռուէ հեռու կը փոխադրուին և կը տարածուին այսպէս ամէն տեղ, մարդկանց, կենդանեաց և ուրիշ ստարկաներու և հովերու միջոցով. մանաւանդ որ միւսնայն չըջանակի մէջ, տարբեր անձեր կամ միւսնայն անձը, մէկ քանի տեղերէ յառաջ եկած հունտեր միւսնայն անգամուն կը բանան, որոնց աղէկ կամ գէշ ըլլալուն վրայ ալ հազիւ թէ տարտամ գաղափարներ ունին: Ահա այս և ասոնց նման շատ մը պատճառներու համար, «եծ չըջանակներու մէջ հունտ հասցնելով

երբեք կարելի չէ ոչ հիւանդութեան առաջը առնել, և ոչ ալ հետեւաբար շերտամարուծութիւնը բարդաւածել: Փորձեցէ՛ք անգամ մը, երկար ատեններէ լվեր, լամ ել էք չերամ չի բռնուած տեղ մը շերտամարուծութեան վերսկսիլ. իսկոյն զգալի տարբերութիւն մը պիտի գտնաք բերքի քանակին և որակին վրայ միանգամայն, մանաւանդ երբ ունէ խնամք և տալըթութիւն չի խնայուին:

ՀՆՏԱՐԱՐՈՒԾՈՒԹԻՒՆԸ ԲՃԻՃՆԵՐՈՒ ՄԷՋ.

Հնտարուծութեան այն եղանակը զոր ցուցուցինք նախորդ յօդուածով, նպատակ ունի առաջուց ընտրել հունտ արտադրող թիթեռնիկները, և իսպառ հեռացնել հընտարուծութենէ բոլոր այն բուծարաններու շերամները, որոնց մէջէն որոշեալ թւով կը ծիծ կամ թիթեռնիկ՝ նպատաւոր պայմաններու մէջ չեն գտնուիր, ոյսինքն առանց հիւանդութեան նշաններու:

Բճճային կոչուած հնտարուծութեան մէջ առաջուց կը հեռացնեն միայն այն թիթեռնիկները, որոնք գէշ կազմակերպուած են. և արտադրող թիթեռնիկները քննութեան կ'ենթարկեն երբ ձուածութիւնը լրացած է. և կը պահեն այն հուստերը միայն, զորս արտադրած են, իրենց առողջութիւնը մանրադիտակով ապացուցուած թիթեռնիկներ:

Այս առթիւ նախապէս քիչ մը զով սենակ մը կը սահմանեն, որ պէտք է քիչ լուսաւորուած ըլլայ. արեգակի ճառագայթները ուղղակի չ'ընդունելով. այդ սենակին մէջ, դիմացէ դիմաց՝ մէկ պատէն միւսը առաստաններ կը ձգտեն: Բարակ պատառի կտորներ կը պատրաստեն, 6 հարմեթր լայն, և 15 հարմեթր երկայն, ասոնցմով պզտիկ քսակներ կը շինեն, իրենց վրայ երկուքի ծալելով. միայն մէկ կողմը՝ վերի ծայրէն 2 հմեթրի չափ աւելի կը թողուն, առաստաններուն վրայ անցնելու համար: Պատառները այսպէս երկուքի ծալելէն վերջը, երկու կողմէն կը կարեն, յետոյ մէջը դուրս կը դարցնեն, որպէս զի կարուածքը ներս մնալով քսակները քիչ մը ուռին: Այս քսակները կը կոչուին հնտարուծութեան մէջ «բճիճ». և ասոնցմէ վեր ի վերոյ 100 հատի չափ պէտք է 25 կուամ հունտ պատրաստելու համար:

Իրաւ է թէ այս կազմաւորման համար ըն-

դարձակ տեղ պէտք է դայց հարկ չ'կայ բոլոր առաստանները միեւնոյն ատեն ձգտել. կը լրաւէ միայն երեք օրուան համար պէտք եղած պատրաստութիւնը տեսնել. որովհետեւ ամբողջ ձուածութիւնը 3 աւուր մէջ լրանա-նալով, այս լրացածները կը վերցուին, և իրենց տեղը նորեր կը դրուին:

Մօտակայ խցիկի մը մէջ, նոյնպէս քիչ մը զով, կը կախեն խոզակներու շարոյնները, ինչպէս բացատրած ենք արդէն:

Թիթեռնիկները խոզակներէն դուրս կ'ելլեն, որոնց մէջէն տկարակազմները և պակասութիւն ունեցողները կը նետեն: Մնացեալները իրենց զուգաւորութիւնը կը կատարեն, և սեղանի մը վրայ կը հաւաքեն զանոնք: Երեկոյին՝ իւրաքանչիւր զոյգը իրարմէ կը զատեն, արուները կը նետեն, ինչպէս ըսինք արդէն. արուները ունէ ազդեցութիւն չ'ունին հակիթներուն վարակման մասին. և էգերը մէյմէկ քսակի մէջ կը դնեն, ուր կ'սկսին ձուածութեան: Երբ ձուածութիւնը լրանայ, առաստանները կը վերցնեն, չոր և զով տեղ մը կը պահեն. որպէս զի աչնան կամ ձմրան մէջ պարապոյ միջոցներուն, մանրադիտակի քննութիւնները կատարուին:

(Շար.)

Ղ. ԲՈՒՆՍ

ԳԼԽԱԽՈՐ ԱԶԳԱՑ

ԵՐԿԱՅՆՈՒԹԵԱՆՑ ԶԱՓԵՐԸ[*]

Ամէն ազգ իրեն համար յատուկ երկայնութեան չափ ունի, և մէկուրը միւսինէն առաւել կամ նուազ կը տարբերի: Մենք հոս այսօր չափաի խօսինք կերպասեղինաց չափերուն վրայ, այլ ճանապարհի և հեռաւորութեանց չափե-

(*) Վերոյիշեալ յօդուածը թէեւ թիւ 37ին մէջ անգամ մը տպուած էր, բայց տըպագրական կարեւոր սխալներ տպրած ըլլալուն, պարտաւորեցանք մէկ քանի ունձանց խնդրանքին համաձայն կրկին տպել:

Մ. Խ.

լուն՝ որք իրարմէ մեծապէս կը տարբերին, բայց իրենց ծագումը միեւնոյն աղբիւրէ բղխած լինելուն՝ դիւրին է ակներեւ պատկերացնել: Շատ անգամներ մեզ հարցումներ ուղղուած են թէ «Մէկ մղոնը ո՞րչափ տեղ է»: Ինչպէս և ինչ պատասխանել, քանի որ պատասխանը բառ մը կամ թիւ մը չէ, զի ինչպէս ըսինք, ազգաց չափերը տարբեր են. արդեօք այդ հարցումն՝ որու պատասխանն կ'ուզուի, ո՞ր ազգի մղոն է. եթէ ազգի անունն յայտնի չէ, կամ գոնէ ո՞ր դրքի մէջ առաջարկուած լինելը ճշդուած չէ, կամ վերջապէս ճամբորդող անձին ո՞ր ազգի պատկանիլը նշանակուած չէ, որոշ չենք կրնար հասկնալ և տարտամ գաղափար մը միայն կ'ունենանք: Ըսողներ կամ կարծողներ կան թէ մղոնը այնչափ տեղ է՝ որչափ մարդու աչքերը զօրեն տեսնել. այս կարծիքը բոլորովին անտեղի է, որովհետեւ ձորի մը մէջ գտնուած ատեննիս հազիւ 10—20 մեթր հեռու պատահութիւն ունինք տեսնելու, դաշտի մէջ գտնուողը կրնայ տեսնել 4—5000 մեթր, լեռան մը դագաթը եզողը կրնայ տեսնել 20—30 մղոն եւ թերեւս ալ աւելի, դարձեալ ամէն մարդու աչքերու տեսողութիւն նոյն զօրութիւնները չեն ունենար:

Թէ մղոններու ծագումն ինչ աղբիւրէ կը բղխի, նախ այս իմանանք:

Երկիրս երկու մեծ և չորս փոքր շրջանակներու կը բաժնուի. երկու մեծերն են Հասարակած և Միջօրէական, չորս փոքրերն են երկու Արեւադարձք և երկու Բևեռային շրջանակը. մեծ շրջանակ ըսուելուն պատճառն այն է որ երկինքն երկու հաւասար մասերու կը բաժնեն. փոքր շրջանակներն՝ անհաւասար մասերու. բայց այս վերջինները մեր այսօրուան խնդրոյն հետ առնչութիւն չունին. պիտի խօսինք մեծ շրջանակին (Միջօրէականին) վրայ:

Միջօրէականը (ինչպէս ամէն շրջանակ) 360 աստիճանաց կը բաժնուի եւ

հաւասար է 40 միլիոն մեթրի, միջօրէականին 1 աստիճանը = է 40000000 : 360 = 111111,11 մեթրի:

Ահա այս մէկ աստիճանին արժէքն եղող 111111,11 մեթրին այս ինչ մասը այսինչ ազգին համար մղոն մ'է. ուրիշ ազգի մը համար ալ այնինչ մասը:

Պրանսայի մղոնն է աստիճանին 60րդ մասը, ուրեմն ֆրանսացոց մղոնն է $111111,11 : 60 = 1851,85$ մեթր:

Օսմանցոց մղոնն է աստիճանին 60 և երկու երրորդ մասը, ուրեմն արժէքն է 1666,66 մեթր:

Անգլիացոց մղոնն է աստիճանին 69րդ մասը դրեթէ. հետեւապէս արժէքը 1609,3 մեթր:

Գերմանիոյ մղոնն է աստիճանին 15րդ մասը. հետեւապէս արժէքն է 7407,4 մեթր:

Ռուսիոյ (վերսթն) մղոնն է աստիճանին 104,25 մասը. հետեւապէս արժէքն է 1068 մեթր:

Իտալիոյ մղոնն ալ նոյնն է ֆրանսացոց մղոնին հետ:

Աւստրիոյ մղոնն ալ նոյնն է Գերմանիոյ մղոնին հետ:

Օսմանցոց մղոնը՝ Թուրքիոյ չափով 2200 մէյմար արշընի է. կամ 2450 շուկայի արշըն:

Անգլիացոց մղոնը՝ անգլիական չափով 1760 եարտա է:

Ռուսաց մղոնը՝ ռուսական չափով 500 ռաժէն է:

Պրանսացիք հեռաւորութեան համար ուրիշ չափեր ալ կը գործածեն և ասոնք են.

Բիլլոմէթր որ = 1000 մեթրի:

Միրիամէթր որ = է 10 քիլոմէթրի (2 ժամու ճամբայ):

Հաոարակ կամ ցամաքային փարսախ որ աստիճանին 25րդ մասն է և = 4444,44 մեթրի:

Ծովային փարսախ՝ աստիճանին 20րդ մասն լինելով = է 5555,55 մեթրի:

Ծովային փարսախը երեք մղոնի հա-

ւասար է, կամ մշտնը ծալային փարսա-
խի երրորդ մասն է: Կը գործածեն նաև
մեթրական փարսախս որ 4000 մեթր է:

Օսմանցւոց մշտնին համար նկատելի
է. Միբիամէթը 2 ժամու ճամբայ լինե-
լով՝ 5000 մեթրն ալ 1 ժամուան ճամ-
բայ կըլլայ, և 1666,66 մեթրն ալ անոր
երրորդ մասը ըլլալով՝ Օսմանցւոց մշտնին
20 վայրկենի ճամբայ ըլլալը ինքնին կը
հասկցուի:

Մէթրական դրութիւնը ընդունուե-
լէն առաջ գլխաւոր քաղքէ մ'ուրիշ գըլ-
խաւոր քաղք մը ճամբորդողը, օրինա-
կի համար Տրապիզոնէն Կարին, ճամբուն
վրայ կը տեսնէր քարեր և վրանին այս-
պէս 1 մշտն, յետոյ երկրորդի մը վրայ
2 մշտն, երրորդին վրայ 1 ժամ, այսպէս
ամէն երրորդ քարերու վրայ 1, 2, 3 եւն.
ժամ գրուած: Մէթրական դրութենէն
ետքը այդ քարերը տեղերու և անուն-
ներու փոփոխութիւններ կրեցին սապէս.
առաջին քարին վրայ նշանակուած է 1
քիլոմէթր, երկրորդին վրայ 2՝ վերջա-
պէս 5րդին վրայ 1 ժամ նշանակուած,
ուրկէ կը հասկցուի թէ 1 քիլոմէթրը 12
վայրկենի ճամբայ է: Այդ նշանաբարե-
րով ճամբորդը կ'իմանայ թէ ո՛րչափ
ճամբորդած է, և որչափ մնացեր է տեղն
հասնելու:

Ընթերցողը կարծեմ համոզում գո-
յացուց թէ ամէն ազգի մշտն միևնոյնը
չէ, և «մշտնը ո՛րչափ է» հարցումին մէկ
բառով չի պատասխանուիր, սակայն հոս
կ'աւելցնենք իբր վերջաւորութիւն թէ,
Անգլիացիք են որ մշտն յաճախ կը գոր-
ծածեն, ուստի և ըստ ամենայն հաւա-
նականութեան կրնայ պատասխանուիլ.

—Մէկ մշտնն է 1609,3 մէթր կամ
1760 եարտա:

Տ. ՊՕՁԱՃԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Խմբագիր Տէր,

«Հանրագիտակ» հանրագումար 1, քաղքոյ.

Յաւօք որտի կ'իմանանք թէ, կարդ
մը հրատարակութիւններու հետեւանօք
Ազգ. Հիւանդանոցի սեփական սիկառի
թղթին հասցիթը կէս առ կէս նուազած
է. եթէ սոցոյգ է առ, Ազգ. Հիւանդա-
նոցը՝ ընդ որս և խեղճ պատուարեալ-
ներն մեծապէս տուժած են այս տեսակ
յերիւրոմներու երեսէն: Իմ անձնական
փորձառութիւնս մէկ կողմ դնելով, սի-
կառի թղթի մասին ունեցած հմտական
ծանօթութեամբս կը հաւաստեմ թէ Ազ-
գին տան թուղթը օտար նմանօրինակ
և համահաստատար գնով ծախուած սի-
կառի թղթերէն լաւ, բնորի և գերու-
ղանց է, և թէ շատ միամիտ և խիստ
անփորձ պէտք է լինինք որ, առանց օ-
տար թղթերու հետ բաղդատութեան
գնելու, համազուինք այդ սնտոի կար-
ծիքներուն, փաստելով ազգային մեծ և
կարօտ հաստատութեան մը նիւթական
օգուտին և միւս կողմանէ ալ այդ միջոցը
հնարող և մինչ ցարդ արգիւնաւորապէս
գործադրող Մարտիկ էֆ. Շիրինեանի
ուժն նուազեցնել և եռանդն պակսեցը-
նել: Ուստի կը հաւաստեմ թէ Ազգին
տան Հիւանդանոցի թուղթը՝ կրնանք ա-
մենակատարեալ վստահութեամբ գոր-
ծածել և ծխելու յոռի և մալի ունա-
կութեան մէջ լողացած ատեննիս, Հի-
ւանդանոցի թղթին բարոյական և նիւ-
թական առաւելութիւնը չ'անտեսելով,
այդ հաստութարեր աղբիւրը չցամաքեցնելու
ազնուութիւնն ունենալ: Ուստի, Տէր
Խմբագրապետ, ինդրեմ որ յանուն ճշ-
մարտութեան և յօգուտ օգնութեան
կարօտ այդ Ազգային յարկին, հաճիք
տեղ մը շնորհել Ձեր հանրագումար թեր-

թին մէջ և բուժել բարեհաճիք դայ-
թակղեալ մտքերն, որով մնամ լի յար-
գանօք Ձեզ:

ՅՈՒՀ. Ի. ԱՐՄԼԱՆԵԱՆ

Ծ, Խ. Արդարեւ խիստ ցաւովի պարա-
գայ մ'է ոս որ ի վեր կը հանէ մեր յարգոյ
նամակադիրը, զգացնել տալով հանրութեան
իր այն ծուռ գաղափարը, որով տոգորուած
է հանդէպ Ազգ, Հիւանդանոցի սիկառի
թղթին: Ի՞նչ է պատճառը՝ որ ժողովուրդը
այդ առաժան տնտարբեր կը գտնուի Ազգ.
այդ միակ տանը բարւոք կացութեան ձե-
ռնառ գտնուելու խնդրոյն մէջ, որու մասին
ամէն ազադայ պատասխանատուութիւն իր
վրայ ծանրաբեռնած է:

Սա մէկ Հիւանդանոցի մատակարարու-
թիւնը չը պիտի կրնանք ազատել զործնա-
կանապէս, գէթ՝ ամէն մարդասիրական զգա-
ցում և պարտաճանաչութիւն մէկ կողմ վնե-
լով, միմիայն օտարներու առջեւ չի կարմե-
լու համար: Բայց զարմանալին այն է որ, երբ
այսպիսի հարցում մ'ուզուի, ամէն կողմէ
հատոյթի նոր աղբիւրներ, ծրագիրներ կ'սկը-
սին տեղալ, փոխանակ արդէն գոյութիւն ու-
նեցողներու յարատեւութիւնը և յաջողու-
թիւնը ապահովել ջանալու: Երտալը՝ ասիկա
հաստատակամ և տոհմատէր ժողովուրդի մը
պատիւ բերող ընթացք է: Եթէ ժողովուրդի
նպատակը այն է որ Հիւանդանոցի թուղթը
չի գործածել ուզելովը Երկրեան Մարտիկ
էֆէնտիի շահերուն վնասէ, շատ կը սխալի.
որովհետեւ՝ անիկա իր գործին մարդն է, եւ
իր սիկառի թուղթերը ուրիշ միջոցներով ալ
չահագործելու ճամբան կրնայ գտնալ, ինչ-
պէս որ ալ գտած է արդէն, քանի որ այդ
թուղթերը հրապարակը գտնուածներուն և
ժողովուրդին գործածել չուզած Հիւանդա-
նոցի թուղթերուն յար և նման են: Միայն
թէ՝ դժբախտաբար տուժողը միշտ Ազգային
Հիւանդանոցն է՝ կարգ մը կարճամիտ նա-
խանձորներու, կարգ մ'ալ միտմիտ անձե-
րու պատճառաւ: Սակայն եթէ խնդիրը խո-
րապէս քննենք, պիտի տեսնենք որ, տու-
ժողը ամէն պարագայի մէջ ժողովուրդն է.
որովհետեւ երբ Հիւանդանոցի այս տեսակ
հատոյթները հետզհետէ դադրին, տարակոյս
չկայ որ, ազգն ժողովուրդին վրայ պիտի
ծանրանայ. և այն տեսն մէկին տեղ երկուք

տալու պիտի պարտաւորի: Սիկառ մ'է պիտի
ծիւնք. ի՞նչու համար Հիւանդանոցի թուղթը
չի գործածէք, որով գէթ օգնութեան կարօտ
ձեր նմաններուն և արեւակիցներուն օգնած
ըլլալու միտքարանքը վայելած պիտի ըլլաք,
երբ այդ թուղթը ձգելով պիտի գնէք ուրիշ
մը, որ ստակով և տեսակով թերեւս անկէ
շատ վար ըլլայ:

Գարակէօգեան Գերդաւտանն և իւր Պա-
րագայք հրապարակաւ կը յայտնեն իրենց
շնորհակալութիւն ամէն անոնց, որք Հան-
գուցեալ Տիկին Երմինէ Գարակէօգեանի (*)
Յուզարկաւորութեան Հանդէսն իրենց յար-
գամատոյց ներկայութեամբ ու իրենց յիշա-
տակելի սիրտաբերութեամբ հաճեցան պատ-
ուել:

(*) Հանրագիտակի անցեալ թուոյն մէջ՝
այս Բարեւաշտուհի Տիկինջ Յուզարկաւորու-
թեան առթիւ գրուած յօդուածի մը ներքեւ
անուշադրութեամբ իբրեւ ստորագրութիւն
գրուած «Եար.» բառը չէ թէ «չարունակելի»
նշանակելու համար էր, այլ խմբագրաց կամ
սրբագրողներու յատուկ լսկոնաբանութեան
մը համաձայն, կրճատեալ հրամանագիր մ'էր
գրաշարին հասկցնող թէ՝ «չարէ՛» նոյն յօդ-
ուածին մուցուած միւս մասն ալ՝ որ ոտ էր.
«Այս առթիւ՝ մեր հանրային ու պաշտօնա-
կան սիրտանքն առ Գարակէօգեան Գերդաւ-
տանն և իւր համայն պարագայս մատուցա-
նելով հանգերծ, կը խնդրենք որ ներողամիտ
գտնուին վերջերս Ազգ. Մամուլին կողմէ իրենց
բարեւաշտական և հանրասիրական զգացմանց
դէմ կարգ մը կարեւոր գրուածոց մասին, ո-
րոց նպատակը անչուշտ չէ թէ Գարակէօգեան
Գերդաւտանի անդամոց անձնական արժա-
նապատուութիւնը (որ վեր պէտք է լինի ա-
մէն տեսակ անձնաշահ նկատումներէ, ամէն
միակողմանի յարձակումներէ) վիրաւորել էր
անչուշտ. այլ նուազ հաճելի կամ իսպառ
պատշաճազուրկ բացատրութեանց ու վարմանց
կերպերով իրենց մարդասիրական և ազգա-
սիրական զգացումները գգուելով, աւելի
փութիւտութիւն, և աւելի ճոխօրէն գրգռել
զանոնք, դէպի բարիքն այն հանրօգուտ, ո-
րու գործադրումն իրենց ժառանգ ու կտակ
եղած էր:

Ծ. ԽՄԲ.

Մտածելով թէ կը վերաբերինք Ազգի մը՝ որու դաս մը մարդիկն Աւետարանին ըսածին պէս՝ «յաճախ ինքեանք ոչ մտանեն և որոց մտանենն՝ ընդդէմ կացեալք արգելուն»։ Նոյն սրբագան Մատենին մէջ սա պատուիրանին համեմատ ալ՝ այդպիսեաց համար «Թոյլ տուք դոցա զի ոչ գիտեն զինչ գործեն» ըսել ու անցնելու է։ Ներքին ամէն ինչ հասկնալ և ամէն ինչ հասկցնել է։ Բաւական է որ ցարդ թեր ու դէմ եղած հանրային բոլոր խօսուածոց ու գրուածոց մէջ լուսի պէս պայծառ կ'երևի ամէն բաց աչքի, և ձայնի պէս յըստակ կը լսուի ամէն խուլ չեղող ականջէ սա ճշմարտութիւնը թէ՝ Գարակէօզեան Գերդաստանը ցարդ միշտ իր նմանեաց մէջ առաջինն է որ գէթ 20000 ոսկիներ մէկանց կը նուիրէ իւր ազգայնոց ընդհանուր օգտին համար։ Ուրիշ ազգային աւելի ճոխ կամ հաւատարման ճոխ բազմաթիւ հայ գերդաստաններն ալ՝ ո՛ւր էր թէ Գարակէօզեան Գերդաստանին եթէ ոչ տուածին՝ գէթ անոր կիսուն կամ քառորդին չափ կտակէին և կտակուած գումարն ալ ողջ առողջ անձեռնմխելի կերպով Ազգին հանրօգուտ բարւոյն ապահովէին ու երաշխաւորէին։

Ա. յրի Տիկին մ'էր որ մեռաւ, սակայն Պոլսոյ շատ մը եկեղեցիք և հանրօգուտ հաստատութիւնք, նոյնպէս ամէն կարգի շատ մը աղքատներ շատ թէ քիչ նուիրատուութիւններով օժտուեցան ու միիթարուեցան։ Երանի՛ ամէն անոնց՝ որոնց մահը Տիկին Երմոնէիին նման չատերու վիշտն սիրտիւն չափ յիշատակելի ու մեծարելի հանդիսանայ։ Յիշատակն ամէն արդարոց և բարերարաց օհնութեամբ եղիցի։

Այն ամսոյ ազգային Հարսանեկան հանդէսներու շարքին՝ մէջ յիշատակութեան արժանի է նաև Ազգին ծանօթ առաջնակարգ վաճառականներէն հանգուցեալ Խորասանձեան Ալիքսան էֆէնտիի երէց որդի՝ Ազն. Կարապետ էֆ. ի՛ Աստարճեան Համեստաշուք Օր. էլիզայի հետ պսակուիլը։ Երկու երկտասարդ լծակիցք խնամեալ կրթութեամբ օժտուած են՝ ընդօրինակելի տիպար ընտանիք մը կազմելու չափ։ Հարսնացելոց ընտանեկան սիրոյ եղեմը մնայ մշտադաւար։ Երջանիկ հարսն ու ժեռան եղած այսօր, օր

մ'ալ երջանկագոյն Հայրն ու Մայրն ըլլան։ Այս առթիւ Հանրագիտակ կը փութայ իր խնդակցութիւններն ու շնորհաւորութիւններն յայտնել։

ՎՐԻՊԱԿ

39րդ թւոյն 621րդ երեսի Ա. սիւնակի 43րդ տողը պէտք է կարդալ այսպէս. «... մարմնիկներէ վարակման մասին՝ արուաները...»։

37րդ թւոյն 588րդ երեսի Բ. սիւնակի 35րդ տողին մէջ «հեղիաման» բառը պէտք է կարդալ «հեղիամուն»։

37րդ թւոյն 584րդ երեսի երկրորդ սիւնակի 35րդ տողին մէջ «որդերու» բառը պէտք է կարդալ «ուրդերու»։

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

Կը խնդրուի թերթիս հետ առնչութիւն ունեցող ամեն անձերէ (գործակալ, բաժանորդ, ևն.) որ բարեհաճին իրենց թղթակցութիւնները ուղղել հետեւեալ հասցէին, ԱՌԱՆՅ ՈՒՐԻՇ ՈՒ ԵՒ Է ՄԻՋ-ՆՈՐԴԻ. հակառակ պարագային, եթէ անպատեհութիւններ տեղի ունենան, ամեն գանգատ անլսելի մնալով, պատասխանատու չենք ըլլար։

در علیہ دہ ہجہ قمریہ ۱۹ نومروی دکانہ «مجموعۂ علوم» غزنیہ
سر محرری (بولاد) افندیہ

Ղ. Բոլատ Տնօրէն-Խմբագրապետ
«ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ»

19. Էսկի-Չապթիյէ, Պաղչէ-Գափու

Սթամպուլ

H. Polad Rédacteur en chef du journal
"HANRAKIDAK",

19. Rue Eski-Zabtié Bahdjé-Kapou. 19
Stamboul

Ի դիմաց ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ կ'ստորագրէ մի միայն Տնօրէն-Խմբագրապետ Ղ. ԲՈՂԱՏ, որու զիմեւ պէտք է, առանց բացառութեան, թերթիս վերաբերեալ ամէն գործառնութեանց համար։

ԱՐՏՕՆԱՏԵՐ Ա. ԼՈՒՍԻՆԵԱՆ



ՀԱՃՈՅՔ ՄԸ

ՈՐ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՏՃԱՌԷ

Ճշմարիտ հաճոյքն այն է որ, ախորժեկի ժա-
մանց մը ընծայելով հանդերձ, առողջութեան
ալ մեծապէս կ'օգնէ: Ներկայ դարուս մէջ հա-
ճոյքի նիւթերը բազմաթիւ են. սակայն զար-
գացած ազգեր ամենէն աւելի, Թէթին նա-
խապատուութիւն կուտան, անոր համար որ,
այս թանկագին ըմպելին ամենածանր յոգ-
նութիւնները չուտով կ'անցնէ և նոր կարով
կը ներշնչէ, մարդուս ձգած աշխատութիւնը
վերսկսելու: Զուտը արիւնը տաքցնելով, մար-
տինը ցուրտին դէմ կը պաշտպանէ՝ ամառն
ալ զովութիւն ընծայելով, շատ մը հիւան-
դութեանց առաջը կ'առնէ: Խնամով պատ-
մրատուած գաւաթ մը Թէթը, նոյնչափ մա-
քութիւն հաւասար սնունդ կը պարունակէ և իր
անբաղդատելի ածնութեամբ կատարեալ նա-
խախնամութիւն սընէ մարդկութեան համար:
Սակայն աւաղ որ Թէթ անուամբ ծախուած-
ներու մեծագոյն մասը խարդախուած ըլլա-
լով, զուրկ են այս առաւելութիւններէն և զա-
նոնք ճանչնալն շատ դժուար է, ուստի անոնք
որ կը փափաքին ԸՆՏԻՐ, ԱՆԽԱՐԴԱՆ և միւս-
նոյն անուն ԱժԱՆ Թէթ խմել, պէտք է ԿՀ
ԵՍՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿԵՐՑ
Թէթերը գործածեն. ուշադրութեամբ փնտ-
ռելով անոնց անունն ու մասնանիւր տուի-
րու վրայ: Որովհետեւ Թէթի այս մեծ վաճա-
ռատուն, իւր երկարամեայ փորձառութեամբ,
արեւելեան երկիրներէ մեծաքանակ Թէթ օր-
տածելուն և ահագին ապրանքներ սպառելուն
շնորհիւ, միշտ անխարդախ Թէթ կը ծախէ
ԱՆՄՐՑԵԼԻ գիներով: Ընկերութեան կեդրո-
նաւորին է Կ. Պոլիս, ձէլալ Գէյ խան, Թիւ 10:

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԸ կը ծանու-
ցանէ Թէ Մանկավարժական Գերականու-
թեան Գ. մասը տպագրութեան յանձ-
նուած է:

Մայսթերաշափթ Սիսթէմի Գաղղիե-
րէն մասի ԺԱ. տետրը հրատարակուած
է և բաժանորդագրութիւնը փակուած է:
Գին 12 տետրերու 25 զրուշ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոչտոյ և Գաւառաց հաւաք	
Հանրագիտակ տարեկան	50 զր.
» Վայելչագրութեան	
բաժինով	80 »
Հանրագիտակ միայն Վայելչագրութեան	
թեան բաժինն	60 »
Հանրագիտակ Վայելչագրութեան	
բաժին գունաւոր և մեծադիր	
36 պատկերներով	110 »

ԱՐՏԱՄԱԽՆԱՆԻ հաւաք

Հանրագիտակ տարեկան	15 ֆր.
» Վայելչագրութեան	
բաժինով	20 »
Հանրագիտակ միայն Վայելչագրութեան	
թեան բաժին	16 »
Հանրագիտակ Վայելչագրութեան	
բաժին գունաւոր և մեծադիր	
36 պատկերներով	25 »

ՀԱՒԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՐ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ
ՎԱՅԵԼՉԱԳՐՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆԻՆ

Դ. ԲՈԼԱՏ

Խմբագրապէս Հանրագիտակ Հանդեսի

Թիւ 19 էփրե-Ջապիէ

Կ. Պոլիս

Տէր.

Գնահատելով Ձեր հանրօգուտ ձեռնարկը,
հաճեցէք զիս բաժանորդ արձանագրել թեր-
թիդ վայելչագրութեան բաժինն
և

1898

Ստորագրութիւն
(Ընթերցիչ)

Բնակութեան տեղ

Հասցէ

ՄԵՍ ՄԹԵՐԱՆՈՅ ԴԵՂՈՐԷԻՑ

Լ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐՁԷ

• ՊՈԼԻՍ ՖԵՏԻԼԵԱՆ ԽԱՆԻ ՏԱԿ ԹԻԻ

Սոյն վաճառատուն պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ՝ ամեն տեսակ թարմ դեղորայք. վիրաբուժական գործիքներ, Անգղիական և Դաղղ. պատրաստ դեղեր, գօնեակներ, գինիներ և հանքային ջուրերու մեծ մթերք մը, յարմար գներով. Լ. Արսլանեան և Ս. Էմիրզէ Ընկերութիւնը երկարատեւ անձնական փորձառութիւններ ունին. Ամեն ջանք և աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախորդներն գոհացրելու համար, մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք զաւառաց համար, որոնց

կը ղրկեն դեղորայք, ամենայն արագութեամբ, թարմ և մատչելի գներով:

Շատեր այնպէս կը հաւատան թէ Պոլսոյ հրապարակին վրայ ճՇՄԱՐԻՏ և ԱՆԻԱՐԴԱԽ Մօռիւ ձկան իւղ չի գտնուիր. այս կարծիքը շատ սխալ է. պէտք ունեցողները թող դիմեն Լ. Արսլանեան և Ս. Էմիրզէ Տեարց Դեղորէից վաճառատունը, ֆրնագլեան Խանի տակ Թիւ 3, ուր պիտի գտնեն ուղղակի Նորվեգիայէն բերել արուած ամենալնտիր ձկան իւղի տեսակներ. Մեծաքանակ եւ փոքրաքանակ վաճառումներ կ'ըլլան խիստ դիւրամատչելի գներով:



ԳՈՐԾԱԿԱԼՔ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Ասա-բազար — Ստեփան էֆ. Սափրիչեան
Արաբկիր — Գ. Տէվէճեան էֆ.
Էրզրում — Եղ. էֆ. Տ. Ազարեան
Թեհրան — Կարապետ էֆ. Բարսեան
Իզմիր — Կարապետ էֆ. Մալէճեանեան
Իզմիս — Աբրահամ էֆ. Կ. Կտաւճեան
Մալկարա — Վ. Մանուկ էֆ. Չօլաքեան
Խարբերդ — Խոսրով էֆ. Քէչիչեան
Թրեպոնի — Դաւուտ էֆ. Գըլըճեան
Սինոպ. — Յ. էֆ. Պետրոսեան

Կիւստան — Բաւեան էֆ. Սօմունճեան
Մոսուլ — Մոթ. Տ. Յովհաննէս քահանայ
Վան — Կարթուսեան
Երզնք — Յակոբ էֆ. Բողաթեան
Պաշարմար — Արմենակ էֆ. Ս. Մսերեան
Երզնք — Ե. էֆ. Գարակէօղեան
Տրապիզոն — Ասհակ էֆ. Էթմէքճեան
Կիլիսիոյ — Յովսէփ էֆ. Տէր-Յովսէփեան
Մանիսա. — Մկրտիչ էֆ. Էրկանեան
Աֆիոն-Դարա-Հիսար. — Արտաէո էֆ. Հալէպեան

Հանրագիտակ կը ծախուի ամեն լրագրավաճառաց քով, մասնաւորաբար

Մագրի-Դիւղ, Պօղոս էֆ. Ազնաւորեանի խանութը.
Դատը-Դիւղ, Լեւոն էֆ. Չպուքճեան Դեղարանը,
Բերա, Մեծ փողոց Դառնիկ էֆ. Կիւլէքեանի խանութը: